

կանոնին կաթողիկեայց թուղթը: Նահատակուած է 60ին, իր եպիսկոպոսութեան երեսներորդ տարին: Անոր նահատակութեան մանրամասն պարագաները կը հաղորդեն մեզ Եւսերբոս՝ Հեգեսիպոսէն առնելով և Կղեմես Աղեքսանդրացին:

Ըստ աւանդութեան, Ս. Յակոբեանց տաճարը կը նկատուի տան տեղը Տեառնեղբոր Յակոբու, որուն մարմինը նախապէս թաղուած է Ս. Աթոռին տակ եւ յետոյ փոխադրուած է աւագ սեղանին ներքև:

2. Ս. Յակոբայ սաճարն եւ անոր սրբավայրերը .

Ս. Յակոբայ տաճարին պատմութեան եւ նկարագրութեան չսկսած՝ յայտնենք թէ վանքին ու տաճարին հիմնարկութեան մասին ո՞ր եւ է յիշատակարան չունինք եւ չենք գիտեր թէ ո՞ր թուականին ան հիմնարկուած է. աւանդութիւնը կը տանի մինչև Տրդատ և Ս. Գրիգոր Լուսաւորիչ ու անոնց կ'ընծայէ վանքին և տաճարին հիմնարկութիւնը. այս աւանդական պարագայէն զատ ամէն ինչ մթութեան մէջ է. թերեւս օր մը յիշատակարան մը անակնկալօրէն լուսարօնէ հաստատութեանս հիմնարկութիւնը. բայց մենք Ս. Յակոբայ տաճարին սրբավայրերու նկարագրութեան ժամանակ առիթ պիտի ունենանք պարզելու թէ Ս. Յակոբայ տաճարին մասնաւոր մէկ սրբավայրը հաստատուած է Ե. դարուն. պատմութիւնը եւ շէնքին ճարտարապետական ձևը կը հաստատեն այդ վարկածը: Մենք սա համոզումը ունինք թէ տաճարի սրբավայրերը միաժամանակ չեն շինուած. գլխաւոր սրբավայրերը Ս. Գլխադիւր եւ Ս. Մինալի մատուռներն գտնէ Ե. դարէն սկսեալ գոյութիւն ունէին. ատոնց և ուրիշ մատուռներուն, իբր լրացուցիչ, շինուած կը թուի Ս. Յակոբեանց գեղեցիկ և հոյակապ տաճարը. բաց աստի, որոշ է նաեւ, եւ պատմականօրէն կը հաստատուի թէ Ս. Յակոբեանց վանքը ու եկեղեցին Ուաչակիրներէն շատ յառաջ արդէն շինուած էր. վանքին արեւմտեան պարսպին ճակատը խաչքար մը կայ հին ու կիսամաշ, որուն թեւերուն անկիւնները չորս ուրիշ խաչեր քանդակուած են, շրջանակին վերեւ երկու խորշերուն մէջ երկաթագիր՝ ՏՐ. ԱՄ. և խաչի պատուանդանին տակ՝ ԹՎ. ՆՆ.